

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2021թ. հունվարի 11-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/3-7 պայմանագրին լրացում կատարելու մասին

Ք. Երևան

07 հունիսի 2021թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Գնորդ), ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա մի կողմից, և

«ԳԱՍՊԱՐԵՆՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ Վաճառող), ի դեմս տնօրեն Ս. Բաղդասարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի և 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչպես նաև Կողմերի միջև 2021թ. հունվարի 11-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/3-7 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետի պահանջները, ստորագրեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը հանաձայնեցին.

1. Կատարողը պարտավորվում է Գնորդին լրացուցիչ մատակարարել սույն Համաձայնագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքը (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:
2. Սույն Համաձայնագրով նախատեսված Ապրանքի գինը կազմում է 199 865 (հարյուր իննսուներեք հազար ութ հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, համաձայն Հավելված 1-ով սահմանված նախահաշվի: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
3. Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:
4. Սույն Համաձայնագրով նախատեսված Ապրանքը Վաճառողի կողմից մատակարարվում են Գնորդին մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ:
5. Պայմանագրի ցանկացած դրույթ կիրառելի է սույն Համաձայնագրի նկատմամբ այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով:
6. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:

